

Եանցի առաջնորդութեամբը Թաւրոն
Ներկայացրին 72 թ. Յունիսի 19-ին,
Ժախսն միջից հանելով դուռ օգուտ մը-
նաց 104 28

Թատրոնի ծախսի մէջ հաշուած էր
սորրանիկի տան վարձ 10 դուր. բայց
նորա Անդամները ընծայեցին յօգուտ
աղբատաց այդ դրամը 10

Մի տարվայ ընծացրում պատրաստ
գումարի տոկոս ստացված է զանազան
Ժամանակում 37 25

Գումարն է 1115 3

Յիշեալ գումարից բաժանուած է մի տարվայ ըն-
ծացրում,

Պարսկաստանից սովի պատճառաւ
Բազու պատահած աղբատներին հացի եւ
ժողովարհածախսի համար 152 44

Բազուարնակ աղբատաց ալիւր եւ փող 152 90

Համախեցի, զետեաշարժի պատճառաւ
Բազու փոխադրուած, աղբատաց ալիւր
եւ փող 177 47

Ղարաբաղցի Բազու բնակվող կաման-
ցաւոր աղբատաց 85 28

Ղարսեցի Յովսէփ Սանասարեանցին
ճանապարհածախս 15

Սպահանցի Աղախան Կիրակոսեանին
արքունի նլանդանոցում 44 օրվայ հա-
մար լոճիկելու վարձ 16 40

Երեսանցի, Նախիջեւանցի, Նուխեցի,
Գերբենացի, եւ Ղալաբեցի Բազու պա-
տահած անցաւոր աղբատաց 48 45

Աղբատ Ննչեցեցելու Թաղման համար . 15 22

Թղթի, ապահովագիր կամ հաշիւ տը-
պելու համար եւ այլ կարեւոր ծախս . 7 60

Մնում է ապառիկ դրամ 16

Եւ զանձապետի մօտ մնում է պատ-
րաստ գումար *) 468 57

Գումարն է 1115 3

Հաշուեանաւթիւնից յետոյ բոլոր անդամները շը-
նորհակարութիւն արին Հոգաբարձուներից, որոնք
ջերմեանոց եւ ճիշտ կերպով առաջ են տարել այդ
գործը: Ընտրուեցան այս անգամ 6 Հոգաբարձուք —

Թ. Աւագ Բահանայ Բուտողեանց, եւ հետեւեալ պա-
րոնայրը — Գ. Կիստորեանց, որ եւ զանձապետ, Բ.
Սարգիսեանց, Մ. Շահակեանեանց, Յ. Աղամեանց,
եւ Խ. Կիրիեանց:

Արդէն բացված է ստորագրութիւնը, որի հետե-
ւանքը ինչ կլինի, ժամանակին կյայտնուի: Ասկայն
յուստի է, որ Բազուարնակ Հացերը այդ աղբատա-
սիրական գործը, ինչպէս սկսել են ճիւղմունանդու-
թեամբ, եւ այսուհետեւ իւրաքանչիւր տարի յառաջ
կտանեն նոյն սիրովը, աչքի առաջ ունենալով անցած
տարիներում Հայ աղբատների դռնէ ի դուռն Թա-
փառելը, նա մանաւանդ եւ եկեղեցիների դռներում
խմբովին կանգնելը մուրացկանութեան համար, որ
կարծես Թէ մէկ նախատիւր էր հարկանում դգա-
ցողների երեւոյն: Բայց այժմ չէ տեսնուում ոչ եկե-
ղեցիների դռները շրջապատած դրանցով եւ ոչ քա-
ղաքի մէջ դռնէ ի դուռն Թափառելիս:

Երամի Թէ ամեն Հայարնակ քաղաքներում եւս տայն
նպատակաւ կազմուէին ընկերութիւններ, որ ցանկալի
եւ սիրելի են Աստուծոյ եւ մարդկան:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՐՋԱԲԷԳԻԱՆԵՅ,

Ի 15 Ապրիլ 1875 — Բ

Ի Բ. —

ԳԱՐՁԵԱԼ ԹԷ՝ ՈՒՐ ԵՆ ԱԵԱՐԱՅՐ ԵՒ ՏՂԱՌՈՒՑ

Էս ամի Թիֆլիսի Մշակ օրագրի № 7 թիւրթի
մէջին, «էդ էլ քեզ կրեաիկայ», վերնագրով՝
Մեկըզատէ օտորադրութիւնով յօգուածը ձեռք
ընկաւ: որ գրուած էր ընդդէմ իմ յօգուածին,
որ տպուած է անցեալ ամի Արարատ ամառգրի
մէջն ԺԱ Ե ԺԲ Համարներումը՝ «Ո՛ր են Ա-
ւարայր Ե Տղմուտ», վերնագրով, Մինչ չէ ձեռ-
նածուխ լինելս նրա կարծիքներն Ե եղբակացու-
թիւնները ջրիլը, քանի մի բառ ասելս չէ աւելորդ,
այս ինքն անհատկանայի է ինձ, ինչից է արդեօք
պարտն ստիպուած էսպիսի հետաքրքրական ա-
ռարկայի մասին գրուած յօգուածի տակին՝ իւր
կրեաին դիմակ դնել, անուր փոխել ու տապալէզ
դուրս գալ: Համազում եմ, որ Պարոն Մեկը-
զատէն է մի Ե նոյն Պարոն Բաֆին, որ իւրեան
ընտկան սովորութիւնովը զանազան դիմակով է
Հանդէս դուրս եկել մինչև ցայսօր օրագրու մնա

(*) Յիշեալ գումարից այս զատկին Հոգաբարձուք սկսեցին
բաժանել աղբատաց:

էս նշան չէ՞ արդեօք, որ նա վստահ չէ իւր վերայ, կամ իւր հրատարակածների վերայ:

Եւ արդէն իմ յօդուածի մէջին խնդրած էի Պարոն Բաֆին թէ, ես ուրախ կլինիմ՝ եթէ նա ինչպէս տկանատես էն տեղըներին իւր կարծիքը հաղորդէր, որպէս զի կարողանան պատմաբանական և աշխարհագրական ուսումնականները, նրա և իմ կարծիքէն եզրակացնել ու նշանակել էն տեղն, որ ամենայն Հայ մարդի համար նուիրական է: Փոխանակ զի նա պատմիչների գրածները համեմատէր այժմեան իւր տեսած աշխարհագրական դրութիւնների հետ, ու իմ կարծիքները ջրէր, ընդ հակառակն, դիմակուած Մելիքբատէ անունով ու ծիծաղելով Խորենացիէն, Ազգար Փարպեցիէն, Նզիշէն և այլ պատմագիրներէ իմ բերած փաստերի վերայ, աւելացնում է թէ, ես մէջ եմ բերում, կոխում՝ բոլոր ուսած և սերտած նրանց խօսքերը: Պարոն Մելիքբատէի էս բառերին ի՛նչ նշանակութիւն որ տամ ես, իմ զրբիչին արժանի չեմ համարում, որքան և նա ինքեան արժանի համարէր. ուստի և էնդունք թող եմ տալիս ուսումնական դասին. բայց այժմ բացայայտնք նրա ասածները, որոնք կրկին անգամ կարող են լինել չարաչար մոլորութիւն հեռաւոր և էն տեղըների դրութեանը անծանօթ ուսումնականներին:

Պարոն Բաֆիի փաստորանն խուսափելով նախնիքների պատմութիւնների վկայութիւններէն կամ իւր տեսած աշխարհագրական դրութիւններէն, առ ի ջրել իմ յօդուածը, յարձակում է նրա վերայ ասելով խառնխուռն միմեանց հակասական, հեքիաթ, խօսք, թուրքի հարիսայ, բազմամասնեայ նիւթերից խառնուած, այժեամեների պորտերի վերայ անուշահոտ մշկի գիւտն Լօնդօնի արքունական բնագիտական ակադեմիային յայտնել, երկաթուղիի գաղափար ելն. և ինչ ամենայն տեղ հեղնական ոճով ուրախ ուրախ առանց մին ապացուցութիւն բերելոյ, իբրեւ յաղթական դք, դափնեայ պսակն ընկալած իւր միտքում, և որպէս թէ էն բառերն են կրետիկայի նշանակութիւնն: Ակն յայտնի էս բառերն նշան են, որ Պարոն Մելիքբատէ վերանուանեալն դեռ ևս չէ ծանօթ կրետիկական մակացութեանը: Աշ

մենայն որ էլ իւր բառգրքումն կգտնէ լաւ ու վատ բառեր, ի հարկէ իւրաքանչիւրն նրանէ իւր արժանաւորութեան և բնաւորութեանը համեմատ միշտ կընտրէ զրելոյ և խօսելոյ ժամանակն:

Պարոն Մելիքբատէի երկար յօդուածի մէջին միայն, միմիայն երկու հարցեր կան, որոնք բացայայտելոյ հարկաւորութիւններ ունին, առ ի փարատել նրա երկմտութիւնն, այս ինքն թէ, Խոր-վիրապէն ցարայ Զփաղինի զաշուն՝ իբր ըստ ասութեան նորա, երիք օրուայ ճանապարհ իցէ, և թէ իբր ես համաձայն իցեմ Պարոն Բաֆիի կարծիքի հետ, որ է Խոյի և Սալմաստի մէջին լինելն Աւարայր և Տղմուտն:

Թէպէտ պարոն Մելիքբատէն (այս ինքն Պարոն Բաֆին, որ մինչև էն իմ յօդուածը հրատարակելն բերանացի ևս յայտնել է ինձ իւր էս համոզունքը) կրկին հերքելոց է նախնիքների վկայութիւնները, բայց ես յենուած եմ ու պետք է յենուիմ նրանցից բերած փաստերի վերայ, հետեւաբար էլ նկատելով պատերազմն եղած տեղերի այժմեան դրութիւնները, համեմատելոց եմ մին զմինի հետ, առ ի որոնել նուիրական տեղն: Ի հարկէ սրա վերայ պարոն փաստաբանն ևս առաւել զայրագնելոց է, բայց ինձ ի՛նչ փոյթ:

Նզիշէի և Փարպեցւոյ տկանատես և ժամանակակից լինելները իւրեանց պատմած առարկաներին, անհերքելի են: Նզիշէն ասում է, «Մեծն Աւարդան հրաման տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, *), քանի մի շարքից յետոյ կրկնում է «Սգրա ամենեքեան համագունդք հասանէին ի գործ պատերազմի ի զաշուն Արտաշատ, և լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր հեծեալ և ընդ հետեակ, **), Այնուհետև նա ոչ ինչ չէ յիշում Հայերի բանակի չուելոյ և տեղափոխուելոյ մասին, և էսպէս էլ պէտք էր լինէր, որովհետև Հայերի կողմէն պատերազմն պաշտպանողական էր, իսկ Պարսից կողմէն յարձակողական: Երես 207, ասում է իսկ յետ բազում աւուրց զօրագլուխն

(*) Նզիշէ. երես 195:

(**) Անդ երես 196:

Պարսից խաղաղ քայր ամենայն հեթանոսական բազմութեամբն և եկեալ հասանէր ի Հեր և Զարեանդի գաւառ (ասոց գաւառ երկիր, որովհետեւ մեր նախնիքն էս երկրան մի գաւառ էին իմանում)։ Եւ անդէն ի գաւառին դռնի առեալ նորա բանակ բողբէր . . . ամրացուցանէր իւրեւ զքաղաք մի ամուր (ուրեմն քաղաքի մօտ այս ինքն Խօյին մօտ չէր) ամենայն պատրաստութեամբ, և 150 օրէն մինչև պատերազմի սկսելն դարձեալ Հայերի բանակի մասին չուերոյ կամ տեղէն շարժելոյ համար ոչինչ յիշողութիւն չէ անում, և զկնի (երես 231) ասում է . . . Աւարդան կարգէր և կազմէր զճակատն յարդարելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Աւրեաց զեղին առ Տղմուտ գետոյ, և սեղ Պարոն Բաֆիի փաստաբանը կարող է ասել թէ, ըստ որում Եղիշէն ասում է . . . ամենայն հեթանոսական բազմութիւնն եկեալ հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և Զարեանդ գաւառ, և անդէն զտեղի առեալ ինչ, ինչ, ուրեմն Հեր և Զարեանդ, այս ինքն Խօյի և Սալմաստի մէջին էր Տղմուտ գետն և էն տեղ զտեղի առեց և էն տեղ էլ պատերազմն եղաւ։ Էս էլ մին խօսք է՝ կարող է նա ասել։

Էս հարցին Փարսեցին պարզ և վճռողաբար պատասխանում է բացայայտ ասելով . . . Սակայն ևս առաւել ստիպով եկեալ (ի Հեր և Զարեանդ գաւառէն) հասանէին գունդն Պարսից ի գաւառն Արտաշ հուպ ի գետին, որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղին Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց (Մուշկան Նիւսարաւուր) յաղագս երկիւղի Հայոց, *)։ Ուր մնաց, հարցնում եմ Պարոն Մելիքզատէին, իւր ցոյց տուած Հեր և Զարեանդըն, միթէ Զօրս ևս չէ՞ Հեր և Զարեանդ այս ինքն Խօյի գաւառէն մինչև ցայսօր։ Փարսեցոյ էս խօսքերն թէպէտ վճռում վերջացնում է իմ և Պարոն Մելիքզատէի վիճաբանութիւնն, այսու ամենայնիւ փոքր ինչ ևս շարունակենք առ ի

փորատել նրա երկմտութիւնն։ Նախ Հեր և Զարեանդի այս ինքն Խօյ և Սալմաստ մշաբների (ըստ ասութեանն փաստաբանի՝ մշաբ ասեմք) սահմանակցութեան մէջին գետ չկայ, հետեւաբար էլ դաշտ ևս չկայ, բաց իրոքը լեռներէ և բլուրներէ, որոնք նշան են էն մշաբների անջատմանը։ Ուրեմն ըստ ասութեան նախնեաց, պէտք է դիմենք Արտաշի և Խօյի այս ինքն Հերի սահմանակցութեանը և նրանց մէջին որոններ Տղմուտն ու Աւարայրն, թէ և էս երեւք հարկաւոր չէ, ըստ որում յայտնի Փարսեցին ասեց . . . եկեալ գունդն Պարսից ի գաւառն Արտաշ հուպ ի գետին որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղին Տղմուտ դաշտին ինչ, և էս հոգ բառն ևս չէ առանց նշանակութեան, այս ինքն ի սահմանակցութեան Արտաշի, որ է Զօրսի շրջափակ տեղին, որին կից են Տղմուտ և Աւարայր զիւրն կամ դաշտն, որոնք մինչև ցայսօր կից միմեանց Մակուի և Խօյի խանութեանց տակն են։ Իսկ փաստաբանն որ ասէ, Խորվիրապէն ցարայ Զիւադինի դաշտի զուխն, որ խառն է Մակուայ դաշտի հետ, երեք օրուան ճանապարհ է, չէր կարող Հայոց գունդն մին օրումն գալ ապաքէն ի նշպէս է ինքն պաշտպան հանդիսանում Պարոն Բաֆին ու տանում Հայոց գունդըն Հերի և Զարեանդի այս ինքն Սալմաստի և Խօյի մէջին զետեղում, այն ինչ նրա ցոյց տուած տեղն վեց օրուան ճանապարհ հեռի կիինի, ըստ հաշուի նորա, Խորվիրապէն Ուրեմն առելի զիւրութիւնով կարող էր Հայերի գունդն Պենտեկոստէի Աւրաթ օրն ելանել, Էսրաթ օրն պատերազմել Մակուայ դաշտին մօտ, քան թէ Խօյի և Սալմաստի մէջին։

Այսու ամենայնիւ էս խնդրի մասին էլ նա իրաւունք չունէր յարձակուել իմ վերայ, այլ պարտաւոր էր նա գունդընդ ստել, ջրել նախնեաց վկայութիւնները, թէ և սրանումն ևս սխալուած կլինէր, թող ներէ նա ինձ էս բառի համար, որովհետեւ ես ինքնս առաւօտեան դուրս եմ եկած Փառնակ զեղէն, որ է Մակուայ դաշտի զիւրն, այս ինքն Վարայ Զիւադինի մօտերըն, և երեկոյեան հասած եմ Խորվիրապի առաջն նրասխի աջակողմումն օժտագայած, Ինչ զարմանք, եթէ Պարոն Մելիքզատէ անուանեալն

(*) Ղաղար Փարսեցի տպեալ ի Վենետիկ 1795, երես 418: Համոզուած եմ որ Պարոն Բաֆին կամ Մելիքզատէն իւր կեանքումն Փարսեցիի պատմութիւնն ծեղրք չէ տուած եւ չէ կարողացած, ապա թէ ոչ էնպէս չէր գրել։

հեծած ուղտի կամ աւանակի վերայ, որ սովորական է էն կողմերի երկրացի ճանապարհորդներին, երեք օրումն հասած լինի Խոր-վիրապ, վասն որոյ էնպէս էլ հաշուով լինի Եթէ էտպէս է, ուրեմն և նա իրաւունք ունի Մեր խնդիրն ամենազիջաւոր խնդիրն էր. արդեօք պատերազմն Հեր և Չարեանդ այս ինքն Պարոն Բաֆիի հայրենիքումն է եղած, թէ Արտաշ գաւառումն, — Արեւն բերած նախնեաց վկայութիւններն արդէն հաստատեցին Արտաշի կամ նրա ու Հերի սահմանակցութեան մէջին լինելն, ուրեմն այսուհետեւ վիճարանելն էս առարկայի վերայ տեղիք չունի:

Գանք Պարոն փաստաբանի իւրեան նեցուկ միւս խնդրոյ վերայ, որիցն եզրակացնելով ասում է իւր ևս համաձայն եմ Պարոն Բաֆիի կարծեաց հետ, բերելով իմ յօդուածէն էս քանի մի բառերն. «որպէս զի ընթերցողներին աւելի շուտով կարողանամ հասկացնել, յարմար եմ համարում սկսել ուղղեորութիւնը Խոր-վիրապէն Գէդ ի Հեր և Չարեանդ գաւառն, որոց մէջին պէտք է որոնած Աւարայրը և Տղմուտը»:

Արանէ Պարոն Մելիքզատէն տեսէք ի՞նչ է ենթադրում. «Հիմնուելով Պարոնի (Հիւրմագանեանի) վերջին խօսքերի վերայ պէտք է վերջոյ թէ Աւարայրը և Տղմուտը գտանվում են Հերի և Չարեանդի մէջտեղում: Ըստ լաւ համարելով Հերը — այժմեան Խոյր, Չարեանդը — այժմեան Սալմաստը (որոց մասին Պարոն Բաֆին և Պարոն Հիւրմագանեանը համաձայն են միմեանց հետ), ուրեմն Աւարայրը և Տղմուտը պէտք է որոնել ոչ թէ Աւարայ Զիադինի կամ Զօրի դաշտերումը, այլ այդ երկու մհալների մէջին այս ինքն Խոյր և Սալմաստի մէջտեղում»:

Ի՞նչ հետեանք. ի՞նչ եզրակացութիւն. էստու՞մն էլ Պարոն Մելիքզատէն կամենում է աշխատաւորութիւն անել, իմ էն ողջ յօդուածն սկիզբէն ցվերքն հերքում է Պարոն Բաֆիի կարծիքն, միշտ պնդելով թէ Աւարայր — Տղմուտն չեն Հեր — (Խոյ) Չարեանդի (Սալմաստի) մէջտեղն. իսկ այժմ երկու բառ իւրեան զէնք չիւնելով, չհասկացողութիւնով կամ կամակորութիւնով, ուզում է կարգացողներին ևս սխալացնել. Անուսում մարդն անգամ էն իմ յօ-

դուածն կարդալէն յետոյ, իսկ և իսկ կհամոզուի որ, իմ ասած «սկսել ուղղեորութիւնը Խոր վիրապէն Գէդ ի Հեր և Չարեանդ գաւառ, որոց մէջին ևն», յարաբերական բառն «որոց» կվերաբերի Խոր վիրապին ու Հեր Չարեանդին, և ոչ թէ Հերին ու Չարեանդին միայն (տեսանք Հեր և Չարեանդն միշտ նախնիքները գաւառ անուանեցին և ո՛չ գաւառք), և մանաւանդ որ Գէդ բառն ընկած է Խոր-վիրապի և Հեր — Չարեանդի մէջն, ինչպէս որ և իմ գրած բառը գաւառ եղակի է, չէր կարող լինել «որոց» Թերեւս Պարոն փաստաբանն էս քերականական արհեստին անտեղեակ է, ուստի և նենդին է նրան:

Մարտն Պարոն Մելիքզատէի ճարտար ենթադրութեանը, որով ցանկանալով նուիրական Աւարայր և Տղմուտն տեղափոխել տանել զետեղել Պարոն Բաֆիի այս ինքն Պարոն Յակոբ Միրզայեանի հայրենիքի մէջին այս ինքն Սալմաստումը, հետեալաբար էլ ինչպէս իւր անդէն նշելով էլ իմ կարծիքը դիմակով է հանդէս բերել ուսումնական աշխարհի առաջին. Արդոյ փաստաբանը թող ներէ ինձ ասել նրան թէ, եղպիսի անուղղադատութիւնն է մին նշան, որով բուն խնդիրն շեղել չըջել ուղղոյնորը և քննաբանութեան կարգ ու կանոն չգիտացողները միայն կուզեն զինուել ու մի և նոյն ժամանակն ու խուսափել ուղիղ պատասխանելէն. Ո՛չ, Պարոն Մելիքզատէ երբէք ուրիշի աղդեցութիւնով ուրիշէն կարծիք փոխ առնելով, ուրիշի մտաց ծնունդն իւրացուցանելով, մտացածին նամակներ, սուտ ու մուտ կեղակարծ ճանապարհորդութիւններ, լուրեր հրատարակելով չեմ զբաղուած և չեմ էլ լծող տալ ուրիշը իմ կարծիքի վերայ դիմակ գնել, ուրեմն լաւ է որ ինձ չստիպէք խօսել, այլ թող տաք լուութիւնն ինձ իմաստութիւն համարելով լուել և չընծայել ձեզ Մշակ օրագրի մի և նոյն 7-րդ. համարում տպած Հուշուից ստացած նամակի վերջին յօդուածի քանի մի շարքերն:

ԳԱՆՈՒՄՍ ԵՒ ՄԱՍԻՆԱՆ.

Ի 1873 -ի 3 8-ի Մայիսի:

Ի Թ-րէն: